ՆԱԽԱԳԻԾ

Սեպտեմբեր 2025թ.

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 122-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, 41-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետին 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ին կայացած թիվ 8 նիստի թիվ 31 արձանագրությունը և Արայիկ Գրիգորի Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/8873/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի նոյեմբերի 15-ի վճռով անգործունակ ճանաչված անձի՝ Գագիկ Գրիգորի Մկրտչյանի (ծնված՝ 1988 թվականի սեպտեմբերի 14-ին, անձնագիր՝ AT 0490974, տրված 057-ի կողմից 2020 թվականի մայիսի 21-ին) խնամակալ Արայիկ Գրիգորի Մկրտչյանին ազատել խնամակալի պարտականությունների կատարումից:

2. Ուժը կորցրած ճանաչել Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 13-ի «Գագիկ Գրիգորի Մկրտչյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» N 122-Ա որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐԴ/8873/02/23 քաղաքացիական գործով 2024 թվականի նոյեմբերի 15-ի վճռով անգործունակ ճանաչված անձի՝ Գագիկ Գրիգորի Մկրտչյանի (ծնված՝ 1988 թվականի սեպտեմբերի 14-ին, անձնագիր՝ AT 0490974, տրված 057-ի կողմից 2020 թվականի մայիսի 21-ին) խնամակալությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ մինչև նրան համապատասխան հաստատություն տեղավորելը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. Համայնքի ղեկավարի տեղակալ
2. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավաբանական բաժին
3. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության, սոցիալական աջակցության և տուրիզմի բաժին